ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ, ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՐՏ, 2019 ԹՎԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

• • •

ՆԱԽԱԲԱՆ

2019 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետությունում Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) գործունեությունն ուղղված է եղել 2018թ. Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակմանը նվիրված համաժողովի կազմակերպմանը, հանրային իրազեկման նպատակով պատրաստվել են ԱՃԹՆ-ի իրականացման հայաստանյան պատմության, կարևորության և ընդհանուր գործընթացի, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կոնֆերանսի ամփոփ ներկայացման, զեկույցի ֆինանսական և կոնտեքստուալ տվյալների վերաբերյալ տեսանյութեր, որոնք տեղադրվել ու տարածվել են սոցիալական ցանցերի միջոցով և հեռարձակվել Լոռիի ու Սյունիքի մարզային հեռուստաալիքներով, իրականացվել է ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի գովազդային արշավ ֆեյսբուք սոցիալական ցանցում, պատրաստվել են տպագրական նյութեր ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմակերպվող ծրագրային միջոցառումներին (ԱՃԹՆ-ի առաջին զեկույցին նվիրված համաժողով, մարզային այցելություններ, կարողությունների զարգացման աշխատաժողովներ) օգտագործելու համար, ապահովվել է ԱՃԹՆ-ի միջազգային միջոցառումներին Հայաստանի ներկայացուցիչների մասնակցությունը: Մեկնարկել են Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցին նվիրված իրազեկման միջոցառումները՝ փետրվարին 19-ին Երևանի պետական համալսարանի ուսանողությանը և դասախոսներին ԱՃԹՆ-ի և առաջին ազգային զեկույցի ներկայացմամբ:

Հաշվետու ժամանակահատվածում ավարտվել են e-reports համակարգում գործիքների ու ձևավորված տվյալների բազայի հիման վրա ֆիլտրերի ստեղծման աշխատանքները՝ կատարելագործելով ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակը և դարձնելով օգտագործողի համար ավելի մատչելի:

ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ներկայացուցիչները Ուկրաինայում մասնակցել է ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 42-րդ նիստին, որտեղ հանդիպումներ են ունեցել Վրաստանի և Ուկրաինայի ներկայացուցիչների, Ուկրաինայի գործարար համայնքի ներկայացուցիչների, իսկ նիստին զուգահեռ ընթացող համակարգային բացահայտման թեմայով քննարկման ժամանակ Հայաստանը ներկայացվել է որպես այն փոքրաթիվ երկրներից մեկը, որը ներդրել է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային հարթակ:

Մարտի 19-20-ն ընկած ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության, Արդարադատության նախարարության, Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ) և լրագրողական համայնքի ներկայացուցիչներից կազմված հայաստանյան պատվիրակությունը Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում մասնակցել է իրական սեփականատերերի թեմայով Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային երկօրյա աշխատաժողովին:

Հաշվետու ժամանակահատվածում ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման իրավական հարցերը կարգավորող օրենքների նախագծերի փաթեթը հավանության է արժանացել ՀՀ կառավարության նիստում և ներկայացվել Ազգային ժողով:

Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրով հաստատված մի շարք միջոցառումներ, շարունակվել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությունը, 2019թ. միջոցառումների պլանավորման և նախապատրաստական աշխատանքները, իրականացվել են ԱՃԹՆ-ի փաստաթղթերի թարգմանություններ:

Համաձայն Հայաստանի Հանրապետության 2019-2020թթ. ԱՃԹՆ աշխատանքային ծրագրի՝ ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի գործունեության և ԱՃԹՆ ներդրման աշխատանքների վերաբերյալ պետք է ներկայացվեն եռամսյակային հաշվետվություններ, որոնք հաստատվում են ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ի կողմից:

ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ՝ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՃԹՆ 2019Թ. ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

ՆՊԱՏԱԿԸ	Մատչելի և ժամանակին տեղեկատվության ապահովում			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ն 1. ՀՀ ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի զարգացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ՀՀ ԱՃԹՆ-ի կայքի կատարելագործված տարբերակ՝ տվյալները բաց տվյալների սկզբունքով, օգտագործողի համար մատչելի եղանակով հասանելի դարձնելու համար գործիքների ապահովմամբ: *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ	Հաշվետու ժամանակահատ-վածում շարունակվել են e-reports համակարգում գործիքների ու ձևավորված տվյալների բազայի հիման վրա ֆիլտրերի ստեղծման աշխատանքները:
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ն 2. ԱՃԹՆ-ի հրապակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը՝* առաջին եռամսյակ	Իրականացվել է	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ Ն 3. ԱՃԹՆ-հիրապարակային հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ պայմանագիր կազմակերպության հետ, տվյալների բազաներ, տվյալների բազաների վերլուծության գործիքներ, առցանց հաշվետվությունների ներկայացման հարթակի կատարելագործում՝ այն օգտագործողի համար	Չի իրականացվել	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն	

	ավելի մատչելի դարձնելու նպատակով *Վերջնաժամկետը՝* առաջին և երկրորդ եռամսյակ			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 4. Կայքի ընթացիկ սպասարկում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ	ընտրված կազմակերպություն, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ կայքում հրապարակված զեկույցներ, հաշվետվություններ, տեսագրություններ, իրավական ակտեր, նորություններ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ տեղեկատվական թերթիկներ, ինֆոգրամներ, ԱՃԹՆ-ի եռամսյակային և տարեկան հաշվետվություններ, ԱՃԹՆ զեկույց, զեկույցի սեղմագիր, տեղեկատվական տեսահոլովակներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, facebook և այլ ցանցեր)	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ սոցիալական ցանցերում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հրապարակված տեղեկատվություն *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 8. Իրազեկվածության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հանդիպումներ (այդ թվում մարզային), հանդիպումներ կրթական հաստատությունների հետ, հանդիպումներ լայն խմբակցությունների հետ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 9. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի պաշտոնական ներկայացում/կոնֆերանս, ԱՃԹՆ-ի կայքի, առցանց հաշվետվությունների համակարգի և տվյալների բազայի ներկայացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի կոնֆերանս *Վերջնաժամկետը՝* Հունվար, 2019	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 11. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի և հանքարդյունաբերության վերաբերյալ կրթական տեսանյութեր *Վերջնաժամկետը՝* երկրորդ եռամսյակ	Ընթացիկ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ապերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 12. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում / քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքերում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի վերաբերյալ մոդուլներ ԲՇԽ-ի, ՔՀԿ-ների, ՔԵԿ-ների, տեղական խմբերի և ակտիվիստների համար և դասընթացներ թիրախային խմբերի համար (ԲՇԽ, ՔՀԿ-ներ, տեղական խմբեր և ակտիվիստներ) *Վերջնաժամկետը՝* երկրորդ եռամսյակ	Ընթացիկ	Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ, Հայաստանի ապերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 1. ՀՀ ԱՃԹՆ պաշտոնական կայքի զարգացում

«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի հետ կատարելագործվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի կայքը՝ ապահովելով տվյալները բաց տվյալների սկզբունքով և հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային e-reports համակարգում հանքարդյունահանող կազմակերպությունների և պետական մարմինների կողմից ներկայացված հրապարակային հաշվետվությունների արդյունքում ձևավորված տվյալների ներկայացման գործիքներով՝ հանրության համար տվյալներն առավել մատչելի ձևով մատուցելու և օգտագործման լայն հնարավորություններ ընձեռելու նպատակով: Ներկայացված ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունների

արդյունքում ձևավորված տվյալների բազայի հիմնական մասի համար (օրինակ՝ արտադրություն ու արտահանում, զբաղվածություն, կազմակերպությունների կողմից պետական և համայնքային բյուջեներ վճարված հարկեր և այլն) ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից նախատեսվել են նաև ֆիլտրեր, որոնց կիրառմամբ օգտատերը կարող է արտահանել իրեն առավել հետաքրքրող տեղեկատվությունը:

Միջոցառում 2. ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակում և հաստատում

Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության և «Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի հետ տեղի է ունեցել հանդիպում, և ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից սկսել են ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքների տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները:

Միջոցառում 3. ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացում

Հաշվետու եռամսյակում ԱՃԹՆ-ի հրապարակման հաշվետվությունների առցանց ներկայացման հարթակի զարգացման աշխատանքներ չեն իրականացվել, քանի որ Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագրի գնումների պլանի փոփոխությամբ պայմանավորված համապատասխան ծառայությունների գնման գործընթացը հետաձգվել է:

Միջոցառում 4. Կայքի ընթացիկ սպասարկում

«Հելիքս կոնսալտինգ» ՍՊԸ-ի կողմից շարունակվել Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի սպասարկման աշխատանքները:

Միջոցառում 5. ԱՃԹՆ-ի կայքի համալրում արդիական տեղեկատվությամբ

Շարունակվել են Հայաստանի Հանրապետության ԱՃԹՆ-ի կայքի բովանդակության զարգացման աշխատանքները: Կայքում լրացվել է բոլոր բաժինների բովանդակությունը, տեղադրվել են ԱՃԹՆ-ի բաց գործելաոճի կանոններով հանրության համար հասանելի փաստաթղթերը և համապատասխան տեղեկություններն ու նորությունները, տեղադրվել են ԱՃԹՆ-ի հայաստանյան պատմության, կարևորության և ընդհանուր գործընթացի, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կոնֆերանսի ամփոփ ներկայացման, զեկույցի ֆինանսական և կոնտեքստուալ տվյալների վերաբերյալ «Ալտեռա» ՍՊԸ-ի պատրաստած տեսանյութերը, առանձին բաժնում հրապարակվել է ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը, ինչպես նաև կայքի տեղեկատվությունը թարգմանվել է անգլերեն:

Միջոցառում 6. Հայաստանում ԱՃԹՆ-ի ներդրման և հանքարդյունաբերության ոլորտի վերաբերյալ տեղեկատվության մատչելի լեզվով հրապարակում և տպագրում, սոցիալական գովազդի պատրաստում

Կայքում հրապարակվել են հաշվետու ժամանակահատվածում իրականացված միջոցառումների վերաբերյալ նորություններ, ՀՀ ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը, զեկույցի սեղմագիրը, ինչպես նաև դրանց անգլերեն թարգմանությունները:

Շարունակվել են 2019թ. առաջին եռամսյակում նախատեսված հանրային իրազեկման միջոցառումների՝ ԱՃԹՆ-ի ներդրման վերաբերյալ սոցիալական հոլովակների պատրաստման, տեղեկատվական նյութերի տպագրության ծառայությունների գնումների գործընթացները, և կնքվել պայմանագրեր ընտրված կազմակերպությունների հետ: ԱՃԹՆ-ի ներդրման վերաբերյալ սոցիալական հոլովակների պատրաստման համար ընտրվել է «Ալտեռա» ՍՊԸ-ն, որը պատրաստել է ԱՃԹՆ-ի հայաստանյան պատմության, կարևորության և ընդհանուր գործընթացի, ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի կոնֆերանսի ամփոփ ներկայացման վերաբերյալ տեսաֆիլմեր, ինչպես նաև զեկույցի ֆինանսական և կոնտեքստուալ տվյալների վերաբերյալ ինֆոգրաֆիկ տեսահոլովակներ, դրանք տեղադրել ու տարածել սոցիալական ցանցերի միջոցով (facebook, YouTube, Twitter), հեռարձակել Լոռիի ու Սյունիքի մարզային ալիքներով և իրականացրել ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի գովազդային արշավ ֆեյսբուք սոցիալական ցանցում: Տեղեկատվական նյութերի տպագրության համար ընտրվել է «Պրինտ Պարտներ» ՍՊԸ-ն, որը ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից կազմակերպվող Ծրագրային միջոցառումներին (ԱՃԹՆ-ի առաջին զեկույցին նվիրված համաժողով, մարզային այցելություններ, կարողությունների զարգացման աշխատաժողովներ) օգտագործելու համար իրականացրել է տպագրություն (նոթատետր, գրիչ, թղթապանակ, անվանաքարտ, շնորհակալագիր, գիքույկ, կրծքանշան, պայուսակ):

Միջոցառում 7. Հանքարդյունաբերության ոլորտի և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկում և լուսաբանում սոցիալական ցանցերի միջոցով (YouTube, Twitter, Facebook և այլ ցանցեր)

Շարունակաբար թարմացվել են Facebook[1] YouTube[2] և Twitter[3] ցանցերում Հայաստանի ԱՃԹՆ-ի էջերը, որոնցում հրապարակվել է ԱՃԹՆ-ի ներդրման և ոլորտի վերաբերյալ տեղեկատվություն՝ ապահովելով դրա հասանելիությունը լայն հանրության համար:

Միջոցառում 8. Իրազեկության բարձրացման միջոցառումների, շահագրգիռ կողմերի հետ աշխատանքային հանդիպումների իրականացում

[1] https://www.facebook.com/EITIArmenia/
[2] https://www.youtube.com/channel/UCx_9yOLmQCj_rwy2wYgRh6A
[3] https://twitter.com/EITI_Armenia

Փետրվարի 19-ին, Երևանի պետական համալսարանում ԵՊՀ երկրաբանության և աշխարհագրության, էկոլոգիայի և բնության պահպանության, տնտեսագիտության, հանրային կառավարման և քաղաքագիտության, ժուռնալիստիկայի մասնագիտացում ունեցող ուսանողների և համապատասխան ֆակուլտետների դասախոսների հետ տեղի է ունեցել հանդիպում-քննարկում Հայաստանի Հանրապետության Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ) շուրջ, որի ընթացքում ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավար Լիլիա Շուշանյանը, ԱՃԹՆ-ի փորձագետներ Լուսինե Թովմասյանը և Անահիտ Առուստամյանը, ԱՃԹՆ ԲՇԽ-ի հանքարդյունահանող խմբակցության անդամ, «Գեոմայնինգ» ՍՊԸ-ի գլխավոր տնօրեն Վահե Վարդանյանը և ԱՃԹՆ ԲՇԽ-ի քաղաքացիական հասարակության անդամ, Երևանի պետական համալսարանի օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբիոնի դոցենտ Հարություն Մովսիսյանը ԵՊՀ ուսանողությանը և դասախոսական անձնակազմին են ներկայացրել նախաձեռնությունը, Հայաստանում ԱՃԹՆ-ի գործընթացը: Ներկայացվել է ԱՃԹՆ-ի առաջին ազգային զեկույցը և զեկույցում ամփոփված տեղեկատվությունը հանքարդյունահանող ընկերությունների եկամուտների, դրանց կողմից կառավարությանը կատարած վճարումների, ինչպես նաև պետության ստացած եկամուտների և այդ հոսքերի կառավարման, մետաղական հանքարդյունաբերության ոլորտում օգտակար հանածոների պաշարների, արտադրության, ներքին իրացման և արտահանման վերաբերյալ, ինչպես նաև ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքում առանձին առցանց հաշվետվության համակարգի միջոցով հասանելի տվյալներն ու համակարգից օգտվելու ձևը: Հարց ու պատասխանի ձևաչափով քննարկվել են նաև ոլորտային այլ հարցեր:

Միջոցառում 9. ԱՃԹՆ-ի 1-ին զեկույցի պաշտոնական ներկայացում / կոնֆերանս, ԱՃԹՆ-ի կայքի, առցանց հաշվետվությունների համակարգի և տվյալների բազայի ներկայացում

Հունվարի 30-ին տեղի է ունեցել ՀՀ կառավարության, Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության կողմից համատեղ կազմակերպված Հայաստանի Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության առաջին ազգային զեկույցի հրապարակմանը նվիրված համաժողովը, որին ներկա էին ՀՀ կառավարության, հանքարդյունահանող կազմակերպությունների, քաղաքացիական հասարակության, ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և այլ անդամ երկրների կառավարությունների, միջազգային գործընկեր կազմակերպությունների ներկայացուցիչներ և այլք: Համաժողովին բացման խոսքով հանդես է եկել ՀՀ փոխվարչապետ Տիգրան Ավինյանը, ով նշել է. «Հայաստանում մետաղական հանքարդյունաբերության ոլորտը մշտապես գտնվել է հասարակության ուշադրության կենտրոնում՝ հաշվի առնելով երկրի տնտեսության մեջ վերջինիս դերը, ինչպես նաև ոլորտի գործունեության հետ կապված սոցիալական, բնապահպանական, տեխնոլոգիական և այլ հարցերը: Հետևապես պարզ է, որ ոլորտի թափանցիկության և հաշվետվողականության բարձրացումը, միջազգային չափանիշներին համահունչ դարձնելը մեզ համար առաջանային նպատակ է, որին հասնելու ամենահուսալի ճանապարհը Հայաստանում EITI-ի սկզբունքների բազմակողմանի ներդրումն էր»: Համաժողովի ընթացքում Համաշխարհային բանկի Հայաստանի գրասենյակի տնօրեն Սիլվի Բոսութղոն ասել է. «Ցանկանում եմ ընդգծել հաջողությամբ ձևավորված բազմաշահառու խմբի կարևորությունը: Վերջինիս

տարբեր կողմերի անդամները՝ կառավարությունից, քաղաքացիական հասարակությունից և հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպություններից, կարևոր դեր են ունեցել Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման գործում և կշարունակեն կարևոր դեր ունենալ հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության վերաբերյալ քննարկումների ժամանակ», իսկ ԱՃԹՆ-ի փոխնախագահ Էդդի Ռիչը նշել է. «Հանքարդյունաբերությունը Հայաստանում ամենաարագ աճող ոլորտներից է: Գնալով ավելի կարևոր է դառնում այն հարցում համոզված լինելը, որ ոլորտային քաղաքականության մասին տեղեկացվածության մակարդակը բարձր է, և այն արդյունավետ է իրականացվում: Արդյունքում կապահովվի, որ Հայաստանը ստանում է այն, ինչ պետք է ստանար՝ միաժամանակ ստեղծելով գրավիչ ներդրումային միջավայր: Մենք շնորհավորում ենք Հայաստանին ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի հրապարակման կապակցությամբ, որտեղ առաջին անգամ մեկ վայրում մանրամասն ներկայացված է, թե ինչպես է ողջ ոլորտը կառավարվում: Այս տեղեկատվությունը հիմնականում հասանելի է առցանց: Եվ այն լավ քաղաքականության հիմքն է»:

Համաժողովի ընթացքում ներկայացվել է նաև www.eiti.am պաշտոնական կայքը, որտեղ հրապարակված են ԱՃԹՆ-ի ներդրման գործընթացում բոլոր առանցքային փաստաթղթերը: Ներկայացվել է ԱՃԹՆ-ի առցանց հաշվետվության համակարգը, որի միջոցով, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, 2018 թվականին առաջին անգամ պետական մարմինները և հանքարդյունահանող կազմակերպություններն առցանց եղանակով ներկայացրել են ԱՃԹՆ-ի հրապարակային հաշվետվությունները, որոնք հասանելի են PDF ձևաչափով www.eiti.am հղմամբ: Համաժողովին տեղի ունեցան նաև պանելային քննարկումներ ԱՃԹՆ-ի փոխակերպիչ դերի և համակարգային տվյալների հրապարակման ապագայի, իրական սեփականատերերի բացահայտման, ինչպես նաև պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ:

Հայաստանի ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման համաժողովի կազմակերպման համար ընտրվել է «Էյ Սի Էս» ՍՊԸ-ն, որն իրականացրել է 2019 թվականի հունվարի 30-ին տեղի ունեցած համաժողովի, ինչպես նաև հունվարի 31-ին հրավիրված հյուրերի համար մշակութային միջոցառման կազմակերպչական աշխատանքները:

Միջոցառում 11. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում

Տես հավելված 1

Միջոցառում 12. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկվածության բարձրացում / քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքերում

Տես հավելված 1

ՆՊԱՏԱԿԸ	**Իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ստեղծում և իրական սեփականատերերի մասին տեղեկատվության հանրայնացում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 13. Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման և իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի մեկնարկի միջոցառման իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Մամուլի ասուլիս *Վերջնաժամկետը*՝ առաջին և չորրորդ եռամսյակ	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 14. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի վերաբերյալ ուսուցում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Ուսուցում *Վերջնաժամկետը*՝ Առաջին եռամսյակ	Չի իրականացվել	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 15. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Իրավական ակտերի նախագծեր *Վերջնաժամկետը*՝ առաջին և երկրորդ եռամսյակ	Չի իրականացվել	Իրական սեփականետերի բացահայտման միջգերատեսչական աշխատանքային խումբ, Արդարադատության նախարարություն, ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 13. Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման և իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի մեկնարկի միջոցառման իրականացում

Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի, իրավական կարգավորումների հանրային իրազեկման և իրական սեփականատերերի բացահայտման գործընթացի մեկնարկի միջոցառումները

հաշվետու ժամանակահատվածում չեն սկսվել, քանի որ ընկերությունների իրական սեփականատերերի բացահայտման պարտավորությունը սահմանող «Ընդերքի մասին օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» և «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը հաշվետու եռամսյակում կրկին ներկայացվել և հաստատվել են ՀՀ վարչապետի աշխատակազմի նախանիստի և նախարարական կոմիտեի ժամանակ, իսկ փետրվարի 21-ին կառավարության նիստում գործադիրը հավանության է արժանացրել մետաղական հանքարդյունաբերության ոլորտում գործունեություն ծավալող կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտման գործընթացը կարգավորող ՀՀ օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ կառավարության օրենսդրական նախաձեռնությունը:[4]

Կառավարության օրենսդրական նախաձեռնությունը համարվել է անհետաձգելի և սահմանված կարգով ներկայացվել Ազգային ժողով: Մարտի 7-ին նախագիծը ներկայացվել է ԱԺ Տնտեսագիտական փորձաքննության վարչություն, Իրավական փորձաքննության վարչություն և Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողով՝ եզրակացությունների և առաջարկությունների տրամադրման համար:[5]

Միջացառում 14. Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման միջազգային փորձի վերաբերյալ ուսուցում

Իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման վերաբերյալ Հայաստանի շահագրգիռ կողմերի հետ փորձառությամբ կիսվելու նպատակով Միացյալ Թագավորության համապատասխան փորձագետների այցը Հայաստան չի իրականացվել, սակայն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից էլեկտրոնային եղանակով տրամադրվել են նյութեր միջազգային համապատասխան փորձի վերաբերյալ:
ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարությունը Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ քննարկել է Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում իրական սեփականատերերի բացահայտման հայտարարագրերի մշակման և ներկայացման համար փորձագետի ծառայությունների գնման համար տեխնիկական առաջադրանքը:

Միջոցառում 15. Իրական սեփականատերերի բացահայտման ենթաօրենսդրական ակտերի մշակում

[4] https://www.e-gov.am/gov-decrees/item/31436/
[5] http://parliament.am/search.php?lang=arm&what=%D5%AF-049&where=whole

Իրական սեփականատերերի բացահայտման գործընթացը կարգավորող օրենքների նախագծերի փաթեթը հաշվետու ժամանակահատվածում ՀՀ Ազգային ժողովի նիստերի օրակարգում չընդգրկվելու և դեռևս հավանության չարժանանալով պատճառով չեն սկսվել ենթաօրենսդրական ակտերի մշակման աշխատանքները: Աշխատանքները կիրականացվեն առաջիկա եռամսյակների ընցաքում Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակում:

ՆՊԱՏԱԿԸ	**Հայաստանի ԱՃԹՆ թեկնածության / անդամակցության կարգավիճակի ապահովում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԲՇԽ-ի նիստեր *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Չի իրականացվել	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ-ի աշխատանքային խմբեր, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 29. ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսներին մասնակցություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ ԱՃԹՆ-ի խորհրդի նիստեր *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 30. Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողական *Վերջնաժամկետը՝* առաջին եռամսյակ	Իրականացվել է	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 34.	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**

Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն	*Արդյունքները՝* Դոնոր կազմակերպությունների հետ հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Պետական բյուջեի աշխատանք, հաշվետվությունների կազմում, ծրագրերի իրականացման համակարգում գնումների գործընթացի ապահովում *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 38. ՀՀ ԱՃԹՆ-ի եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Եռամսյակային հաշվետվություններ *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 39. Համագործակցություն ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի այլ անդամ երկրների հետ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Գրություններ, հանդիպումներ, կոնֆերանս զանգեր *Վերջնաժամկետը՝* ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 41. Թարգմանչական աշխատանքներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Վերջնաժամկետը՝ ընթացիկ	Ընթացիկ		
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				

Միջոցառում 25. ԲՇԽ-ի նիստերի անցկացում

Հաշվետու ժամակահատվածում ԲՇԽ-ի նիստ տեղի չի ունեցել:

Միջոցառում 26. ԲՇԽ-ի աշխատանքային խմբերի հանդիպումների անցկացում

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գլխավորությամբ տեղի է ունեցել աշխատանքային խմբի երեք հանդիպում՝ ԱՃԹՆ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության (ՊՀ) հայեցակարգային փաստաթղթի մշակման շուրջ, որոնց արդյունքում մշակվել են փաստաթղթի հետևյալ բովանդակային մասերը՝ նախաբանը, հայեցակարգային փաստաթղթի մշակման գործընթացը և նպատակը, պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը կամ շրջանակը:

Միջոցառում 29. ԱՃԹՆ-ի խորհրդի նիստերին և կոնֆերանսներին մասնակցություն

ԱՃԹՆ-ի հայաստանյան քարտուղարության ներկայացուցիչները մասնակցել են Ուկրաինայի Կիև քաղաքում փետրվարի 27-28-ին կայացած ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի նիստին, որտեղ քննարկել են գլոբալ գործընթացի զարգացումները, Համաշխարհային բանկի և այլ դոնորների աջակցության հեռանկարները, անդամ երկրների վավերացման գնահատականները, ինչպես նաև երեք տարին մեկ կազմակերպվող ԱՃԹՆ-ի միջազգային համաժողովին ընդառաջ ԱՃԹՆ-ի ստանդարտի փոփոխությունների փաթեթը:
ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի 42-րդ նիստին զուգահեռ կազմակերպվել էր նաև համակարգային բացահայտման թեմայով քննարկում: Միջոցառման նպատակը ԱՃԹՆ-ի այլ անդամ երկրների փորձի ներկայացումն էր, որոնք այս ուղղությամբ արդեն իսկ հասցրել են աշխատանքներ իրականացնել և արդյունքներ գրանցել: Ներկայացվող երկրների շարքում էր Հայաստանը, որն այն փոքրաթիվ երկրներից մեկն էր, որը ներդրել է հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային հարթակ: Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավարը, ներկայացնելով հայաստանյան փորձը, ընդգծել է նաև վերջինիս առանձնահատկությունն արդեն առկա մյուս համակարգի համեմատ: Մասնավորապես, քարտուղարության կողմից մշակվել է ոչ միայն էլեկտրոնային ստորագրությամբ հաշվետվությունների ներկայացման համակարգը՝ ապահովելով տեխնիկական սխալների նվազեցման և ժամանակի կրճատման հնարավորություն, այլև ներմուծվել է հիմնական տվյալները բաց ձևաչափով օգտատերերին հասանելի դարձնելու գործիքակազմ: Սա հատկապես կարևոր է շահագրգիռ կողմերին գործընթացում ներգրավելու, երկխոսության և նոր բարեփոխումների խթանման տեսանկյունից: Հարց և պատասխանի ժամանակ կարծիք է հնչել, որ եթե այլ երկրներում այս տվյալներով հետաքրքրված են գործարարները, ապա Հայաստանում դրանց հիմնական կիրառողները նախատեսվում է, որ կլինեն քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, ինչպես նաև պետական մարմինների աշխատակիցները, ովքեր պրոակիվ կերպով կնախաձեռնեն ոլորտում դրական փոփոխությունների բերող ծրագրեր:

Մարտի 19-20-ն ընկած ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության, Արդարադատության նախարարության, Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ) և լրագրողական համայնքի ներկայացուցիչներից կազմված հայաստանյան պատվիրակությունը Ֆիլիպինների մայրաքաղաք Մանիլայում մասնակցել է իրական սեփականատերերի թեմայով Ասիա-խաղաղօվկիանոսյան տարածաշրջանային երկօրյա աշխատաժողովին, որտեղ Հայաստանի Հանրապետության Արդարադատության նախարարության հակակոռուպցիոն և քրեակատարողական քաղաքականության մշակման վարչության ներկայացուցիչ Արփինե Սարգսյանը ներկայացրել է նաև Հայաստանում բարձրաստիճան պաշտոնյաների եկամուտների հայտարարագրման համակարգը: Աշխատաժողովի ընթացքում տարածաշրջանի երկրները ներկայացրել են ԱՃԹՆ-ի շրջանակներում նախաձեռնած քայլերը, օրենսդրական նախաձեռնությունները, ինչպես նաև արդեն նեդրվող համակարգերի թույլ և ուժեղ կողմերը: Իսկ Միացյալ Թագավորության Բիզնեսի, էներգետիկայի և արդյունաբերական ռազմավարության դեպարտամենտի Կորպորատիվ թափանցիկության և ռեգիստրի բարեփոխման ղեկավար Ստեֆան Վեբստերի հետ առանձին հանդիպման ընթացքում Հայաստանի ԱՃԹՆ-ի ղեկավար Լիլիա Շուշանյանը և Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ) խորհրդատու Գոռ Խաչատրյանը քննարկել են նաև Մեծ Բրիտանիայում ներդրված փորձը: Միաժամանակ պայմանավորվածություն է ձեռք բերվել փորձի փոխանակման նպատակով շարունակական համագործակցության հաստատման շուրջ:

Միջոցառում 30. Հայաստանի ԱՃԹՆ 2018թ. աշխատանքային ծրագրի կատարողականի մշակում և հաստատում

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է Հայաստանի ԱՃԹՆ-ի 2018թ աշխատանքային ծրագրի կատարողականը՝ հաշվի առնելով ԲՇԽ անդամների դիտարկումները, սակայն հաշվետու ժամանակահատվածում ԲՇԽ-ի նիստ տեղի չի ունեցել, և ԲՇԽ-ի հաստատմանը կներկայացվի երկրորդ եռամսյակում կայանալիք նիստին:

Միջոցառում 34. Գործընկեր և դոնոր կազմակերպությունների հետ համագործակցություն

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը հանդիպումներ է ունեցել Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ներկայացուցիչների հետ Հայաստանի ԱՃԹՆ 2019-2020թթ. աշխատանքային ծրագրով սահմանված միջոցառումների իրականացման և իրականացման ժամանակացույցի քննարկման շուրջ, մասնավորապես 2019 թվականին Համաշխարհային բանկի ֆինանսավորմամբ իրականացվող ԱՃԳԾԱ Դրամաշնորհ թիվ TF0A6768 (Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն) ծրագրի շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ-ի 2-րդ զեկույցի, ինչպես նաև 2020 թվականի ԱՃԹՆ-ի զեկույցի նախնական ուսումնասիրության, իրական սեփականատերերի բացահայտման հանրային ռեգիստրի ծրագրային ապահովման ստեղծման հարցերի շուրջ և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) կողմից իրականացվող «Աջակցություն գլոբալ Արդյունահանող ճյուղերի թափանցիկության

նախաձեռնության (EITI) իրականացմանը Հայաստանում, Վրաստանում և Ուկրաինայում» ծրագրի շրջանակներում 2019 թվականին իրականացվելիք մի շարք միջոցառումների շուրջ՝ մարզային այցելություններ, տվյալների համակարգային բացահայտման ուսումնասիրություն, Հայաստանի նախավավերացման և վավերացման գործընթացին փորձագիտական աջակություն, մետաղական հանքարդյունաբերության ոլորտի կազմակերպությունների իրական սեփականատերերի բացահայտումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման և լավագույն փորձի փոխանակման աշխատաքներին աջակցություն, Հայաստանը 2019 թվականի հունիսի 17-19 կայանալիք ԱՃԹՆ-ի համաշխարահային կոնֆերանսին ներկայացման և Ազգային նորարարական էքսպոյում ներկայանալու աշխատանքներին աջակցություն, ԱՃԹՆ-ի ներդրման շրջանակում տարածաշրջանային համագործակցության և փորձի փոխանակման և այլ աշխատանքներ, ինչպես նաև իրական սեփականատերերի բացահայտման թեմայով հանրային իրազեկման միջոցառում:

Միջոցառում 35. Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարության աշխատանքների ընթացք

Հաշվետու ժամանակահատվածում Հայաստանի ԱՃԹՆ-ի քարտուղարությունը համակարգել է ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» պետական հիմնարկի կողմից իրականացվող Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող «Հայաստանի արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանն աջակցություն» դրամաշնորհային ծրագրի ֆիդուցիար հարցերի, մասնավորապես հաշվետու ժամանակահատվածում գնումների գործընթացի ապահովման և 2019 թվականի բյուջեի պլանավորման հետ կապված աշխատանքները, ինչպես նաև հաշվետու ժամանակահատվածում սահմանված միջոցառումների պլանավորման և իրականացման աշխատանքները՝ համաձայնեցնելով դոնոր կազմակերպությունների հետ, կազմակերպել հանդիպումներ շահագրգիռ կողմերի, գործընկերների ԲՇԽ-ի անդամների, ԲՇԽ-ի պատասխանատու հանքարդյունաբերության աշխատանքային խմբի անդամների հետ՝ ապահովելով վերջիններիս հետ ԱՃԹՆ-ի ստանդարտի իրականացման հարցերի շուրջ պարբերաբար քննարկումներն ու համագործակցությունը:

Միջոցառում 38. ՀՀ ԱՃԹՆ եռամսյակային հաշվետվությունների կազմում և հաստատում

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից մշակվել է ԱՃԹՆ-ի ներդրման աշխատանքների 2018 թվականի 4-րդ եռամսյակի հաշվետվությունը:

Միջոցառում 39. Համագործակցություն ԱՃԹՆ միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի այլ անդամ երկրների հետ

Հաշվետու ժամանակահատվածում ԱՃԹՆ-ի քարտուղարության պատասխանատուները համագործակցել են ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տարածաշրջանային պատասխանատուների հետ Հայաստանում

ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման, ԱՃԹՆ-ի զեկույցի կապված մեկնաբանությունների և խորհրդատվության ստացման, 2019 թվականի հունիսի 17-19 Փաիզում կայանալիք ԱՃԹՆ-ի համաշխարհային համաժողովում Հայաստանի մասնակցության կազմակերպչական հարցերի շուրջ, կազմակերպվել են տեսազանգեր: ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի հրապարակմանն նվիրված համաժողովին մասնակցելու հրավերներ են ուղարկվել ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության և ԱՃԹՆ-ի այլ անդամ երկրների ներկայացուցիչների, որի արդյունքում համաժողովին ներկա էին ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության ղեկավարի տեղակալը, տարածաշրջանի ղեկավարը, հասարակայնության հետ կապերի համակարգողը, Ֆիլիպինների Հանրապետության ԱՃԹՆ-ի քարտուղարության ղեկավարը, Ուկրաինային արդարադատության նախարարի տեղակալը, ներկայացուցիչներ Վրաստանի շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարարությունից, Վրաստանի էկոնոմիկայի և կայուն զարգացման նախարարությունից, Ղրղզստանի ազգային վիճակագրական կոմիտեից, Ղազախստանի ներդրումների և զարգացման նախարարությունից, Համաշխարհային բանկի և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ)-ի տարածաշրջանային ներկայացուցիչներ և այլք:

Համաժողովի ընթացքում հունվարի 31-ին հանդիպում-քննարկում է տեղի ունեցել համաժողովի մասնակից Վրաստանի պատվիրակության ներկայացուցիչների, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ՀՀ ԱՃԹՆ-ի քարտուղարության միջև՝ Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման փորձի ներկայացման շուրջ:
Ուկրաինայի Կիև քաղաքում փետրվարի 27-28-ն ընթացող ԱՃԹՆ-ի միջազգային խորհրդի նիստի ընթացքում տեղի է ունեցել հանդիպում-քննարկում ՀՀ ԱՃԹՆ-ի պատվիրակության և Ուկրաինայի գործարար համայնքի ներկայացուցիչների հետ, որի ընթացքում քննարկվել են Ուկրաինայում գործող և նախագծային փուլում գտնվող օրենսդրական կարգավորումները, ինչպես նաև ընկերությունների փաստացի գործելաոճն իրական սեփականատերերի հայտարարագրման և այլ գործընթացներում: Փետրվարի 27-ին Հայաստանի ԱՃԹՆ-ի ներկայացուցիչները և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) Գերմանիայի դաշնային կառավարության Եվրոպայի արևելյան գործընկերության հանրային վարչարարության ծրագրի ներկայացուցիչները GIZ-ի Ուկրաինայի գրասենյակում համատեղ հանդիպում են ունեցել Վրաստանի և Ուկրաինայի շահագրգիռ կողմերի հետ՝ նպատակ ունենալով փոխանակել ձեռք բերված փորձով և մշակել առաջիկա մեկ տարվա համագործակցության աշխատանքային ծրագիրը:

Միջոցառում 41. Թարգմանչական աշխատանքներ

Հաշվետու ժամանակահատվածում կատարվել է Հայաստանում ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման շրջանակում անհրաժեշտ փաստաթղթերի թարգմանություն, մասնավորապես հայերեն են թարգմանվել ԱՃԹՆ-ի տվյալների համակարգված բացահայտման (mainstreaming) ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի ուղեցույցը, հանքարդյունահանող ընկերությունների իրական սեփականատերերի բացահայման միջազգային փորձի ուսումնասիրության նպատակով ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության տրամադրած էլեկտրոնային նյութերը՝ իրավական ուղեցույց «ընկերությունների վրա նշանակալի ազդեցություն կամ վերահսկողություն» արտահայտության իմաստի վերաբերյալ՝ նշանակալի ազդեցություն ունեցող անձանց ռեեստրի համատեքստում, ընկերության վրա նշանակալի ազդեցություն ունեցող մարդկանց

ցանկը և սահմանված պայմանները, ինչպես նաև անգլերեն է թարգմանվել 2019 թվականի ԱՃԹՆ-ի զեկույցի տեխնիկական առաջադրանքը:

ՆՊԱՏԱԿԸ	ԱՃԹՆ ստանդարտին համապատասխան ԱՃԹՆ-ի զեկույցի կազմում			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 42. ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲՇԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ ՀՀ կառավարության որոշում *Վերջնաժամկետը*՝ առաջին և երկրորդ եռամսյակ	Իրականացվել է մասամբ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 43. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեծանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Հանդիպում, առաջարկություններ, ԲՇԽ-ի նիստ *Վերջնաժամկետը*՝ առաջին եռամսյակ	Իրականացվել է մասամբ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, այլ շահագրգիռ մարմիններ	

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Միջոցառում 42. ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարում, նախագծի հաստատում ԲՇԽ-ի կողմից և ներկայացում ՀՀ կառավարություն

Հաշվետու ժամանակահատվածում սկսվել են ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների և լրացումների կատարելու կառավարության որոշման նախագծի մշակման աշխատանքները:

Միջոցառում 43. ԱՃԹՆ-ի առաջին զեկույցի ներկայացման արդյունքում ստացված առաջարկությունների, բացահայտված թերությունների և ԱՃԹՆ-ի միջազգային քարտուղարության կողմից ներկայացված բացերի քննարկում ԲՇԽ-ի կողմից՝ առաջարկությունների իրականացման մեծանիզմների որոշման և անհամապատասխանությունների պատճառների վերացման նպատակով

ԱՃԹՆ-ի քարտուղարության կողմից առանձնացվել են մի շարք օրենսդրական և ինստիտուցիոնալ և իմպլեմենտացիոն բացեր, որոնք ներկայացվել են ԲՇԽ-ի նախագահի պաշտոնակատարին և հանձնարարականների տեսքով տրվել է համապատասխան ընթացք: Հաշվետվությունների ձևերի վերաբերյալ զեկույցում ներկայացված բոլոր առաջարկությունները հաշվի են առնվել ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 8-ի N666 որոշման մեջ փոփոխությունների նախագծի մեջ:

ՆՊԱՏԱԿԸ	**ԱՃԹՆ ստանդարտի ներդրման շրջանակի ընդլայնման նպատակով Հայաստանի Հանրապետության իրավական դաշտի համապատասխանեցում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 51. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի կազմում և հաստատում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման մասին ԲՇԽ-ի որոշում, Տեխնիկական առաջադրանք *Վերջնաժամկետը*՝ երկրորդ եռամսյակ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ԲՇԽ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 52. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքները՝ Նախնական ուսումնասիրություն, իրավական ակտերի նախագծում *Վերջնաժամկետը*՝ երրորդ եռամսյակ	Ընթացիկ	ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				
Միջոցառում 51. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի կազմում				

Միջոցառում 52. Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում սկսվել են Հայաստանի ԱՃԹՆ-ի շրջանակի ընդլայնման հետ կապված իրավական բացերի վերհանման և նախնական ուսումնասիրության տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքները:

ՆՊԱՏԱԿԸ	**Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդնում**			
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Ճանապարհային քարտեզի միջոցառումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	
ՄԻՋՈՑԱՌՈՒՄ N 56. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ	**Արդյունքը և վերջնաժամկետը**	**Իրականացման կարգավիճակը**	**Պատասխանատուները**	**Նշումներ**
	Արդյունքը՝ Հանդիպումներ *Վերջնաժամկետը՝* Ընթացիկ	Ընթացիկ	ԲՇԽ, ՀՀ վարչապետի աշխատակազմ/ Հ-ԱՃԹՆ-ի քարտուղարություն, ընտրված կազմակերպություն, ԲՇԽ-ի աշխատանքային խումբ, պետական մարմիններ	
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ				

Միջոցառում 55. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի գործողությունների իրականացում

Հաշվետու ժամանակահատվածում շարունակվել են Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի 1-ին միջոցառման՝ «Հայաստանյան ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի մոտեցումը պատասխանատու հանքարդյունաբերության վերաբերյալ» հայեցակարգային փաստաթղթի մշակման աշխատանքները, մասնավորապես մշակվել են հետևյալ բովանդակային մասերը՝ նախաբան, հայեցակարգային փաստաթղթի մշակման գործընթացը և նպատակը, պատասխանատու հանքարդյունաբերության սահմանումը կամ շրջանակը:

Մարտի 27-ին, համաձայն Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության ճանապարհային քարտեզի 2-րդ միջոցառման՝ հանքարդյունաբերության ոլորտի տնտեսական վերլուծության աշխատանքներին մասնակցություն, կարծիքների և առաջարկությունների տրամադրման նպատակով ՊՀ աշխատանքային խմբին էլեկտրոնային եղանակով ուղարկվել է «Հայաստանի ընդերքի ոլորտի տնտեսական վերլուծությունը և դրա ազդեցությունը կայուն զարգացման վրա» ուսումնասիրության ամփոփ նկարագիրը:

Միջոցառում 56. Պատասխանատու հանքարդյունաբերության գործելաոճի ներդրման աջակցության աշխատանքային խմբի հանդիպումներ

Մարտի 19-ին և 26-ին ԱՃԹՆ-ի պատասխանատու հանքարդյունաբերության հարցերով զբաղվող աշխատանքային խմբի ղեկավար, ԱՃԹՆ ԲՇԽ-ի անդամ, բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Իրինա Ղափլանյանի գլխավորությամբ տեղի են ունեցել աշխատանքային խմբի հանդիպումներ ԱՃԹՆ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության (ՊՀ) հայեցակարգային փաստաթղթի մշակման շուրջ:

Հավելված 1

2019 թվականի առաջին եռամսյակում «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում իրականացված աշխատանքները

Տեղեկատվությունը տրամադրվել է «Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից

1. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ տեղեկատվական/ճանաչողական նյութերի ստեղծում և տարածում

«Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ն ԱՄՆ ՄԶԳ-ի աջակցությամբ իրականացվող «Պահանջատեր հասարակություն հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում 2018 թվականի նոյեմբերին հրավիրեց քաղաքացիական հասարակության կազմակերպություններին ներկայացնել դրամաշնորհային ծրագրերի առաջարկներ՝ նպաստելու թափանցիկությանը և հաշվետվողականությանը հանքարդյունաբերության ոլորտում: Մրցույթի արդյունքում 2019 թվականի հունվարին հաղթող ճանաչվեցին «Էկոլուր», «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ները և «Կապան» քաղաքացիական նախաձեռնությունը:

«Էկոլուր» ՀԿ-ի գործողությունների ընդհանուր բնութագիրն է պատրաստել մատչելի տեղեկատվական փաթեթ ԱՃԹՆ-ի ստանդարտի, ԱՃԹՆ-ի զեկույցի, ԲՇԽ-ի գործունեության վերաբերյալ (իրազեկման թերթիկներ), ինչպես նաև ներկայացնել Սյունիքի, Լոռի և Գեղարքունիքի մարզերում գտնվող «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի, «Ագարակի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի («ԳեոՊրոՄայնինգ»), «Թեղուտ» ՓԲԸ /«ՎՏԲ-Հայաստան» բանկի, «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ-ի, «Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատ» ՓԲԸ-ի, «Կապանի Լեռնահարստացուցիչ կոմբինատ» ՓԲԸ-ի վերաբերյալ ԱՃԹՆ-ի զեկույցում

բացահայտված տվյալները, այդ ընկերությունների գործունեության սոցիալական ազդեցությունը ազդակիր համայնքներում:

Հաշվետու եռամսյակում Կապան նախաձեռնությունը և «Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն» ՀԿ-ն մոնիթորինգ են իրականացրել համապատասխանաբար Լոռիում և Սյունիքում հետևյալ հարցերի շուրջ՝

- «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքով նախատեսված ազդակիր համայնքներին հատկացվող սուբսիդիաների տրամադրման կարգը, ընտրված նախագծերի բնույթը և ընտրության գործընթացը, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների ընտրությունը,
- Ընկերությունների կողմից պայմանագրերին համապատասխան կատարած սոցիալական ծրագրերը,
- Ընկերությունների կողմից կամովին կատարված սոցիալական ծրագրերը,
- Ընկերությունների կողմից համայնքներին որպես վարձակալություն, սերվիտուտ, գույքահարկ և այլն վճարված գումարների ծախսումը:

Հաշվետու ժամանակահատվածում Էկոլուր» ՀԿ-ի պաշտոնական կայքում հրապարակվել են մի շարք նորություններ:[6]

2. «Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման խթանում» ԱՄՆ ՄԶԳ դրամաշնորհային ծրագրի շրջանակում հանքարդյունաբերության և ԱՃԹՆ-ի վերաբերյալ հանրային իրազեկության բարձրացում/ քննարկումներ, մասնավորապես՝ ազդակիր համայնքներում

«Էկոլուր» ՀԿ Շնող/Թեղուտ համայնքի համար պատրաստել և տարածել է 40 իրազեկման թերթիկներ ԱՃԹՆ-ի ամենակարևոր բաղադրիչների և քաղաքացիական հասարակության իրավունքների և շահերի պաշտպանության վերաբերյալ: Թերթիկները փակցվել են նաև համայնքի հանրային վայրերում՝ Շնողի համայնքապետարանում, Թեղուտի բնակավայրի ներկայացուցչի նստավայրում, դպրոցներում, Թեղուտի մշակութային տանը, խանութներում, փոստում: 2018 թվականի մարտի 1-2 տեղի

[6] https://www.ecolur.org/hy/news/mining/---/10914/
https://www.ecolur.org/hy/news/mining/--/10907/
https://www.ecolur.org/hy/news/mining/-2020-1--/10890/
https://www.ecolur.org/hy/news/mining/--/10884/

ունեցավ հանդիպում Շնողում 43 մասնակիցների հետ:[7] Միջոցառման մասնակիցները ծանոթացել են ԱՃԹՆ-ի գործընթացին, ցուցադրվել է ԱՃԹՆ քարտուղարության կողմից պատրաստված տեսանյութ, բաժանվել են իրազեկման թերթիկները, ներկայացվել է ԱՃԹՆ-ի շրջանակներում «Թեղուտ» ՓԲԸ-ի վերաբերյալ տեղեկատվական փաթեթը, քննարկվել են «Թեղուտ» ՓԲԸ-ի սոցիալական ծրագրերը, գործունեության ազդեցությունը համայնքի վրա, հավաքագրվեցին տեղի բնակիչների առաջարկությունները:

Շնող/Թեղուտ համայնքում 20 բնակչի հետ անցկացվել են սոցիալական հետազոտություն «Թեղուտ» ՓԲԸ /«ՎՏԲ-Հայաստան» բանկի գործունեության՝ համայնքի վրա ազդեցության վերաբերյալ: Արդյունքում պատրաստվել է համայնքի վրա Թեղուտ ՓԲԸ գործունեության սոցիալական ազդեցությունների բնակչության գնահատականները, սեփական շահերը պաշտպանելուն ուղղված ԱՃԹՆ-ի գորընթացներում համայնքի ներկայացուցիչներին ներգրավելու խնդիրները, ԱՃԹՆի բազմաշահառու խմբի համար համայնքում արված առաջարկությունները:[8]

«Հանքարդյունաբերության ոլորտում թափանցիկ և հաշվետու կառավարման և Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության (ԱՃԹՆ/EITI) խթանում» ծրագրի շրջանակում Հայաստանի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ), ակտիվ երիտասարդական խմբերի և ՏԻՄ ներկայացուցիչների համար ՀԱՀ Հակոբյան բնապահպանական կենտրոնը Թրանսպարենսի ինտերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի հետ համատեղ մարտի 22 /26 մասնակից/ և մարտի 29 /29 մասնակից/ կազմակերպվեց երկու դասընթաց ՔՀԿների համար Երևանում: Դասընթացը վարում էին Լուսինե Թովմասյանը, Հարություն Մովսիսյանը և Ալեն Ամիրխանյանը:[9]

[7] https://www.ecolur.org/files/uploads/presentationteghoutcjscpdf05032019.pdf

[8] https://www.ecolur.org/files/uploads/2019/EITI%202019/Tegut%20social%20investigation/teghutsocialreportarm.pdf

[9] https://www.facebook.com/events/520222668382211/